



ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳԸՆԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, ՏՐ. Մ. Ս. Գաբրիելեան

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Քաղաքականութեան վերայ ուսումնասիրութիւնք և քննադատութիւնք կատարեցին իրենց գործ, եթէ լուսամիտ հասկացողութիւն ծաւալելու օգնեցին:

Կը մնայ այսուհետև ջանալ կատարել աւելի դժուար մասն գործոյն: Պէտք է բարձր ու լայն ՍԻՐՈՅ օրինակն աւելնեցնել սէր ի գործիչ և ի կուսակցութիւնս, յառաջ բերել գործարանական վիճակ (etat organique), որպէս զի ճշմարիտ ազգային կեանք ու վերաշինութիւն կարելի լինի:

ՀԱՅՔ 1894 ին

ՀԱՅՔԻ 1894 թուականին բաժանորդագրութիւն բացուած է արդէն, կը խնդրեմք որ մօտաւոր ինչպէս հեռաւորք փութան նորոգել անյապաղ և անմիջապէս իրենց բաժանորդութիւն, քաջ յիշելով թէ բաժանորդ անոնք կը հաշուին որք գինն կը յղեն հրամանին հետ:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Առ աշակից խմբակս լինի և Պոսթընի որք փութացին Հայքի օգնութեան հասնիլ հետեւեալ նուիրատուութեամբք:
Մեծ. Տեարք Կ. 5 տոլար, Յ. 5, Ա. 10,

Ն. 5, Է. 5, Փ. 5, Խ. 1, Վ. 5, Ս. 5, Բ. 2,
Նաև այլ և այլ տեղերէ
Մեծ. Տեարք,
Ա. և Ս. 6, Գ. Գ. 5, Ա. Կ. 3: Գումար 62տ.

Շնորհակալութեամբ ստացանք վեներեակոյ Մխիթարեան բաղմարդիւն Տպարանին «ՅՈՒՅԱԿ ԳՐՈՅ» (1716—1893), որ ազգային և համաշխարհային աշխարհահանդէսներու մէջ արծաթ մետալներով վարձատրեալ է:

Շնորհակալութեամբ ստացանք Հնչակեան կուսակցութեան Սոսիալիստական գրադարանի ութերորդ հրատարակութիւնն «ԻՐԱՒՈՒՆԻ ԾՈՒԼԱՆԱԼՈՒ» աշխատասիրութիւն Պօլ Լաֆարգի:

Լոնտոնեան Լարմէնիի ներկայ տարեշրջանին վերջին թիւն հրատարակեցաւ: Յառաջիկայ տարեշրջանին դարձեալ երկլեզուեան պիտի լինի հրատարակութիւնն, անգլիերէն և Ֆրանսերէն, և տարեկան բաժնեգինն 15 շիլին (երկուքն ի միասին):

ՀԱՅՔԻ ներկայ թուոյ մեծ կարեւորութիւնն նկատելով՝ աւելորդ օրինակներ կը յղուին ոմանց, ցրուելու համար:



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," ևն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎՄԱՆԻՆԿՈՒԹԻՒՆ

Պատասխանք առ Հնչակեան թղթակիցս
— Մեծ ժողով Հայոց Ամերիկայ. ի 1 Նոյ. 1893
— Նամակ Վանէն — Նամակ ի Կեսարիոյ. —
Ամերիկացի Հատագովք Հայկական դատին
Օրիորդ Ա. Ս. Պէլքուէլ. և Ֆ. Է. Քլարք — Ա.
մերիկեան քաղաքացի ընդունուած անձանց
իրաւունքն օտար երկրաց մէջ — Կոստանդնու-
օլիս — Այլևայլք

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E. (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th Փողոց
Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր:

ՊԵՏԱՍԽԱՆՔ

ԱՌ ՀԵԶԱԿԵԱՆ ԹՂԹԱԿԻՑՍ

ՀԱՅՔԻ 20ր թուոյ «Յայտարարութիւ-
նն» մեծ յուզում պատճառեք է մեր Հն-
չակեան եղբարց մէջ: Ընդունեցանք բաղ-
մաթիւ նամակներ որք, ոչ բացատրու-
թիւն կը խնդրէին, ոչ առարկութիւն կ'ա-
նէին, այլ բարկութեան արտայայտու-
թիւններ էին, ծաղրանկարներ, հեզնա-
կան փոխանակագրեր և անասելի տեսա-
կէն անազնիւ հայհոյանք և յիշոցք: Նա-
մակաց մեծ մասն անստորագիր էին: Դո-
ցա ամենուն կուտամք հետեւեալ ընդհա-
նուր պատասխանն:

Սիրելի Հայրենակից.

Ձեր նամակն (կամ ծրարն, կամ պատ-
կերն) ստացայ: Յայտնի է թէ բարկու-
թեան վայրկեանի մի մէջ զայն յղել փոր-
ձուած էք: Ես անոնք մանաւանդ կը մե-
ղադրեմ որք փափուկ խնդրոյ մի կնճռո-
տութենէն օգուտ քաղելով կը ջանան
ծուռ մեկնութիւններով և սուտ լուրերով
ձեր միտքն պղտորել:

Ամիսներ, թերեւս տարիներ կ'անցնին,
և դուք ալ կը համոզուիք թէ սխալ հաս-
կացած էք խօսքերոյ, և սխալ ըմբռնած
էք գիտաւորութիւնս:

Ձեր նամակի և կամ ծրարի փոխարէն
կը յղեմ ձեզ իմ եղբայրական յարգանքս
ու սիրոյ բարեւս:

Մ. Ս. ԳԱՅՐԻԷԼԵԱՆ

Խմբագիր ՀԱՅՔԻ

Մեզ յղուած նամակներուն մէջ կային
երեք կամ չորս նամակներ որք խնդրոյն
վերայ կը խօսէին, թէ և դարձեալ փոքր
ի շատէ կծուութեամբ: Նոցա պատասխա-
նեցինք առանձին առանձին: Հոս կը դը-
նեմք մեր պատասխաններէն մի քանի կը-
տորներ ի տեղեկութիւն ընդհանրութեան:

Ա.

Մեծ. Տէր,

Գոհ եմ որ ձեռնէ մի լուրջ նամակ
կը ստանամ: աւելի բացատրութիւն և
լոյս կը խնդրէք: Կը բաղձայի որ ձեր

հարցում աւելի որոշ լինէր: Յօդուածին ամեն գաղափարին դէմ է ձեր դժգոհութիւն, թէ ինչ ինչ մասանց, և յատկապէս ո՞ր մասանց: «Ձեր առջի համոզումները տարբեր էին» կ'ասէք: Այդ խօսք որոշ չէ: Հնչական կուսակցութեան մասին «Հայք»ի առաջին տարիէն սկսեալ քննադատութիւններ արած եմ, թէ՛ նոցա ընկերավարական և թէ՛ գործնական չափազանցութեանց դէմ խօսած եմ: Եւ այժմ ալ Թրքահայոց բոլոր ներդրութիւնն նոցա թիւր կերպերուն վերագրած չեմ: 314 էջին մէջ գրած եմ «պէտք չէ կարծել թէ նկարագրեալ ձախող և տառապիչ արդիւնքներն բոլորովին Հնչական առաջնորդներու ուղղութեան կրնձայեմ»: Բացատրութեանցս եղանակն տեղ տեղ ուժգին է, բայց ամեն ինչ որ իբրեւ իրողութիւն յիշած եմ, վաւերական աղբիւրներէ են. և դատողութիւնս կամ դիտողութիւնս այդ վաւերական տեղեկութեանց վերայ հիմնեալ են: Ես առաջինն չեղայ «աւազակ» բառն գործածելու, և այդ անհաճոյ բացատրութիւնն չպիտի ուզէի գործածել եթէ արդէն Եւրոպական մամուլն մէջ գործածուած չգտնէի: Հայոց համակիր Տէյլի Նիւզն է որ հեռագրին վերնագիր կը դնէ ՁԵՐԲԱԿԱՆԱՐԻՄՆ ՀԱՅ ԱՌԱՋԱԿԱՅ, և կը յաւելու թէ նոքա իրենք գրենք ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ կը կոչէին: Մեզ համակրող եւրոպացիք, որք յեղափոխութեան ինչ լինելն և անոր լաւ ու յոռի կերպերն գտնէ մեզ չափ դիտեն, միտնենքուր կերպն պատշաճ և պատուաւոր և համակրելի յեղափոխական կերպ չեն համարիր: Պէտք էր որ մեք չտեսնել ձեւացունէինք այս ամենն: Բարեկամ, շատ խոր քաղաքագէտ լինելու պէտք չկայ գիտնալու համար թէ մեր երկրին աշխարհագրական դիրքն և ժողովրդեան տարածումն և այլ հանգամանք շատ տարբեր են քան զՊուլկարացն, քան զՅունացն են: Նաև պէտք է չմոռնալ թէ մեծ Պետութեանց ոչ մին մասնաւորապէս համակիր է մեր դատին: Մեր բոլոր գործողութեանց մէջ մեր գլխաւոր հաշիւներէն պէտք է լինի թէ ինչպէս անենք որ պետութիւնք և ժողովուրդք աւելի և աւելի համակրին մեզ, եթէ ոչ ամենքն, գտնէ ոմանք: Ես պիտի ասեմ թէ քաջութեան ցոյց պէտք է անեմք. բայց քաջութեան ցոյցերն այնպէս անել պարտիմք որ բա-

նիմաց, արդարութեան ծարաւի, ինքնօրինութեան յարմար ժողովրդի քաջութիւն լինի մեր քաջութիւն, ոչ թէ խօլ և անիմաստ քաջութիւն: Մեր խնդիրն յոյժ յոյժ փափուկ է, աւելի փափուկ քան զպուլկարացն և զայլոց: Աւելի նուրբ խոհեմութեան և խորագոյն իմաստութեան պէտք կայ մեր դատն յառաջ տանելու համար: Զարմանալի չէ որ սխալներ գործուած են: Միայն ցաւալի պիտի լինէր եթէ այդ սխալներ չտեսնէինք, կամ տեսնելէ յետոյ ժողովրդային բարկութենէ վախնալով լռէինք: Բարեկամ, ես հայրենասիրութիւնն ու յեղափոխութիւնն այդ կերպով չեմ ըմբռներ: Ես չեմ կարող ժողովրդականութիւն չահելու համար միշտ կեցցէ՛ և յաղթութիւնն պռռալ: 1870ին Ֆրանսիոյ մէջ նախարարներ, պետական մարդիկ, իմբագիրներ շատ մեծ վստահութեամբ խօսեցան իրենց երկրին ուժին վերայ, և ասացին թէ բանակին համար կոճակ մ'իսկ պակաս չէ: Փողոցաց մէջ չու կազմակերպելով «ի Պե'րլին» ազադակեցին: Բայց երբ պատերազմն սկսաւ, չուտով տեսնուեցաւ թէ ազադակներն սուտ էին, թէ բանակն անպատրաստ էր, և Ֆրանսիոյ չարաչար յաղթուեցաւ: Ես երբ «Յայտարարութիւնն» արի, դիտէի թէ գտնէ 100 բաժանորդ պիտի կորուսանէի և պիտի տուժէի ժողովրդականութենէն, բայց թող ես կորուսանեմ, միայն թէ հայրենասէրք ճիշդ ըմբռնումն ու նենտն իրաց վիճակին և յեղափոխութեան յոյժ փափուկ գործն ղեկավարելու համար իմաստաբոյն մարմնոյ մի կազմաւորման աշխատին: Ես փութորիկէ վախցող չեմ: Զգօն հայրենասէրներու բաւական մեծ թիւ մի կը հասկանայ դիտումս և կը համակրի ընթացքիս: Քաջայայտ եմ թէ այս անհաճոյ դէպքեր քիչ ժամանակէն կը վերջանան: Ներկայ տխրութեան կը յաջորդէ ճշմարիտ միութարութիւն և խրախուսական վիճակ:...

Մնամ յարգանք

Մ. Ս. ԳԱՐԻԻԵԼԵԱՆ

Բ

Սիրելի բարեկամ,

Ձեր բարկացայտ քննադատութիւնն կարդացի: Կը կարծէի թէ վտանգ չկար ձեր կողմանէ թիւր հասկացողութեան,

բայց կը տեսնեմ թէ սխալած եմ: ... Դուք կ'ասէք ինձ. «Հազիւ մէկ ամիս կայ որ դուք Պրն. Չերազը քննադատելով նորան համարեա թէ վախկոտ համարեցիք նորա քիչ զոհերով մեծ արդիւնք ստանալու ըսկզբունքի համար. իսկ այսօր դուք նորանից աւելի կը սոսկաք ու կը դողաք...»

ՀԱՅՔԻ 18դ թուոյ մէջ ջանացեր էի բացատրել թէ զոհողութեան լիուրի չափն յանձն առնուլ պարտիմք որպէս զի ապահովեմք վերջնական յաջողութիւնն: Եթէ ոք 5 կանգուն լայնութեամբ փոսի մի վրայէն ցատքել ուզէ, պարտի բոլոր ուժն ժողովել և ջանալ 5 և կէս կանգուն ցատքել, չիցէ՛ թէ շորս կանգուն և ինն տասներորդ ցատքելով փոսն իյնայ: Մեր ազգային փրկութեան մեծ և ահաւոր փորձին մէջ ալ պարտիմք զոհողութեանց և ուժի վերջին սահմանն մեզ չափ առնուլ, չիցէ՛ թէ վրիպիմք:

ՀԱՅՔԻ 20դ թուոյ մէջ ոչ թէ, որպէս դուք կը կարծէք, կը հակասեմ վերի ըսկզբունքին, այլ կ'ամբողջացունեմ զայն սա յաւելուածն անելով թէ ոչ միայն զոհողութեան այլ միևնոյն ատեն և իմաստութեան ծայրագոյն հնարաւոր չափն պարտիմք բռնել: Գործածել բոլոր ոյժն, բայց ոչ թէ վատնել: Զոհողութիւն անել բայց իմաստուն կերպով: Քաջութիւն զործել, բայց արդար և համակրելի քաջութիւն: Շատ չարաչար հասկացած կը լինի ոք իմ միտք, եթէ այնպէս կարծէ թէ մեր զոհողութեանց և ուժի ծայրագոյն չափն արդէն պատրաստ է, գործածելի վիճակի մէջ: Ո՛չ, ո՛չ. պատրաստ չափն յոյժ անբաւական է, պէտք է խոհեմ գործածութեամբ ազգն յառաջ մղել, ուժերն զարթուցանել, մշակել: Եթէ առաջնորդք այնպիսի և այնքան չարժուինք անել տան որ հետեւեալն եղող զոհողութեանց քանակն մեծապէս անցնի պատրաստ չափն, ժողովուրդն կը ծանրաբեռնի և չգիմանալով կ'ընկճի: Զոհողութիւնք այնպիսի աստիճանաւ պէտք է մեծնան որ կարենան կամաց կամաց աճիլ և վերջին ճգնաժամումն հասնիլ ծայրագոյն չափին:

Ձեր կուսակցութիւն բաւական չի յարգեր այս սկզբունք, թէ պէտք է մեծ տնտեսութեամբ կոշում անել զոհողութեանց, Մինչև անգամ բռնի զոհողութեանց բեռ կը դնէք և այդ կերպիւ ժո-

վորի կարող դասն կը խրտուցանէք: Բայց այսի, նեղութեան աւելորդ բաժին մ'ալ ձեր ընկերվարական դաւանութեան պաշտօնաւ կը բերէք ժողովրդին: Մեղք չէ՞ միթէ որ հայ ժողովրդին գլխուն քիչ մի տագնապ ալ դայ այնպիսի վարդապետութեանց դրօշ պարզելով որ նորա վիճակին և պայմանաց բոլորովին օտար է: Ի՞նչ պէտք է գործքի նեղութեան հետ «Թէորեա» ներու նեղութիւն աւելցունել: Ուրիշ կես մ'ալ կայ: Ձեր կուսակցութեան քաղաքական դաւանանքն ալ, որ է «Լայն ռամկավարութիւն» անկախ մէկ Հայաստանի մէջ, չափազանցեալ պահանջ մ'է: Դուք Հայ ժողովրդի ընդհանուր բաղձանքն ու ձգտումն չէք արտայայտեր այդու: Ներսէս Պատրիարք և ազգին խոհուն գլուխներն «վարչական ինքնօրինութիւն» բաւական համարեցան: Այժմ ալ նոյնին կը բաղձայ ազգին խոհուն մասն, այսինքն որ Սուլթանին վեհապետութեան ներքև հարկատու բայց ինքնօրէն Նահանգ լինին Հայաստանի այս ինչ գաւառներն: Հնչակեան պետքդ աւելի քան զայդ պահանջելով անշուշտ ժողովրդի մէկ մասին առջեւ աւելի սիրելի և ժողովրդական կը լինիք, բայց Հայոց իրական և արդար պահանջին երեւակայական և անարդար երեւոյթ կուտաք, որով թ'է թուրք կառավարութիւնն չափազանց կատաղօրէն կը դիմադրէ մեզ ամենուս և թէ Եւրոպացիք չփոխած կը մնան:

Ձեր սոսիալիսդ վարդապետութիւնն և ձեր ազգային քաղաքականութիւնն — երկուքն ալ չհայկական են, հեռեւապէս անբնական, և անոր համար աւելորդ արգելքներու զարնուիլ կուտան հայ ժողովուրդն և աւելորդ սպառում կը լինի ուժոյ:

Կ'արժէ որ ազգին կէսն զոհուի միւս կէսն փրկելու համար: Բայց այս ասեւ չէ թէ մէկ կէսն այնպէս պէտք է զոհուի որ միւս կէսն չփրկուի:

Ֆեմալ Ձեր բարեկամն

Մ. Ս. ԳԱՅՐԻԷԼԻԱՆ

ՄԵԾ ԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿՈՅ

Ի 1 ՆՈՅԵՄԲԵՐ 1893

Այն ժողովն զոր կը նկարագրեմք, է քան զամենայն մեծն որ տեղի ունեցաւ արտասահմանի մէջ, քանզի աւելի քան երկու հազար Հայեր ունկնդիր էին:

Ատենապետն էր Մեծ. Տիար Արամ Բզնունի: Հայրենասիրական երկու երգոց երգուելէն յետոյ, ատենապետն մի քանի խոսքով բացատրեց ժողովոյն մեծ կարեւորութիւնն և խօսք տուաւ առաջին ատենախօսին, Տեառն Ապահուելոյ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՎԱՀԱԳՆ ԱՊԱՀՈՒՆԻՈՅ

Որդի՛ք Հայկայ, որդի՛ք փառաց.

Ո՞ր իձէնջ որ հմուտ է Հայոց Պատմութեան, կրնայ ասել թէ կը չափազանցեմ «որդիք փառաց» կոչելով զձեզ: Դուք, այժ, Հայեր՛, որդիք էք դիւցազանց: Ո՞ր ազգ կրնայ ցուցնել աւելի մեծ թագաւոր քան զՏիգրան, աւելի մեծ զօրավար քան զՎահան Մամիկոնեան, կո՞մ ո՞ր աղբի պատմութեան մէջ կրնայ գտնուիլ ճառ պատերազմական՝ հաւատար այնմ զոր խօսեցաւ մեր զօրավար քաջն և անմահն Վարդան (ծափափարով թիւն): Այն ազգն որ իւր ահագին զօրութեամբ կը դռնալոր յարեւելս և սարսափ կ'ազդէր ազգաց, միթէ առանց փառաց և առանց զօրութեան՞ է այսօր: Ո՞չ ապաքէն նա այսօր ալ իւր ծոցէն հանճարեղ զօրավարներ, խորամիտ քաղաքագէտներ, աշխարհահռչակ արուեստագէտներ և մեծ գիտուններ ու հեղինակներ կը հանէ: Հայն ունի այսօր Փռանսացոց նուրբ ճաշակն, Անգլիացոց քաղաքական ոգին, Գերմանացոց հզօր իմացականութիւնն, Զուեցերիացոց պէս սիրող է անկախութեան, Ամերիկացոց պէս գործունեայ է և Յունաց պէս եռանդուն: Այսպէս Հայն բարդելով յանձին այլ և այլ ազգաց սքանչելի յատկութիւններն, է արդարեւ քան զամենայն սքանչելին ու հիւանալին ազգաց և ազանց: (ծափ.)

Թուրք կառավարութիւնն փոքր ինչ նշմարած լինելով Հայոց այս բարեմասնութիւններն և վախնալով թէ մի գուցէ հակադարձ յառաջդիմութեամբ նոքա իրենց բռնի մէջ ամփոփեն երկրին դրամական ոյժն և կառավարութեան սանձն, առաւել քան երբէք սկսաւ նախանձիլ անոնց, հարստահարել սարսափելի կերպով: Բ. Դուռն, վատթարագոյնն աշխարհի կառավարութեանց, իւր չարագէտ հնարիւք մահ կը սպառնայ ցեղերու լաւագուներին. ինչ՞ կ'ասեմ, ապուշ քաղաքականութեամբ ջնջել կը հնարի իւր Հայ հպատակներն որ միակ կեանքն ու զօրութիւնն են իւր անկանոզ պետութեան, այնքան կուրացեալ է իւր ճշմարիտ շահերն տեսնելու: (ծափ.)

Իսկ Եւրոպա յանցապարտ և անգութ անտարբերութեամբ կը դիտէ մեր մրցումն ընդ թրքին: Շահախնդիր և կեղծաւոր պետութիւններ, որք անամօթաբար կը լիզեն իրենց ստորագրութիւնն 61դ յօդուածի տակէն: Ամօթ այո՛, որ Եւրոպա չի հասկանար «հիւանդ մարդուն» վարակիչ և մահացու հիւանդութիւնն, և չի՛ օգներ մեզ ազատութեան այս փառաւոր մրցման մէջ: (ծափ.)

Ամեն Հայ լաւ իմացած է թրքին դիւաշունչ դիտումն և Եւրոպայոյ ոճրագործ անտարբերութիւնն: Եւ ամենուս հոգւոյն մէջ այժմ մէկ քաղցրահունչ անուն կայ—այն է ՀԱՅԱՍՏԱՆ. (ծափ.) մէկ նշանաբան—այն է ԱԶԱՏՈՒԹԻՒՆ. (ծափ.) մէկ դրօշակ—այն է ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ. (ծափ.) և ամենուս ձեռքն մէկ դործիք—այն է ՍՈՒՐ (երկար ծափափարով թիւն):

Անողորմիկ Եւրոպա, դու մի՛ օգներ, մեք ահա ելած եմք ոտքի և կը խորտակեմք բռնապետի լուծն (ծափ.) Դուք ալ կ'իմանաք չուտով թէ Հայն դիւցազանց սերունդ է (ծափ.): Ահա մեր ոտից ներքեւ կը սարսի Օսմանեան պետութիւնն բովանդակ, կը դողայ Փատիշահն իւր գահից վերայ և կը դղրդայ Եւրոպա (մեծաղուրդ ծափափարով թիւն):

Հայ յեղափոխականաց զօրութեան ահագին չափն սկսած է գգալի լինիլ Սուլթանին, որ անձամբ տնձին ելած է զայնս ճմլել. այլ ինչ դառն յուսահատութիւն կը կրես, ո՛ր հրամանատարդ հաւատացելոց, զի ահա մեր կողմանէ չնչին կորուստներ կը լինին ու քու զօրքերդ մեռ-

եալ ու վերաւոր բազմութեամբ գետին կը սփռուին: (ուժգին և երկար ծափ.)

Զարկէ՛ք, քաջեր, զարկէ՛ք, թող յաղթահարի թշնամոյն զօրութիւնն (ծափ.) թող դողայ Բ. Դուռն (ծափ.), թող կործանի օսմանեան բռնապետութիւնն (ծափ.)

Արդէն իսկ «հիւանդ մարդն մեռած է, (ծափ.) և կը թաղենք զայն շուտով (ծափ.)

Հայեր, գոչեմք միշտ ազատութիւն և կամ մահ (քուռն ծափ. և կանչք) և միշտ միշտ զարնեմք այն բազկաւ ուր Տիգրաններու արիւնն կ'ընթանայ (ծափ.):

Յեղափոխութեան ժամն հնչած է (ծափ.) ազատութեան ժամն ալ կը հնչէ ընդ հուս (ծափ.): Կեցցէ՛ Յեղափոխութիւն. կեցցեն՝ յեղափոխականք, կեցցէ՛ Հայաստան: (Երկարատև և մեծաղոյր ծափահարութիւնք և կանչք.)

Յաւարտ այս ատենախօսութեան 10 վայրկեան միջոց պարապոյ տրուեցաւ յորում հանդիտականք ջերմապէս շնորհաւորեցին զՏիար Վահագն և ոմանք մինչեւ իսկ համբուրեցին նորա շրթունքն:

Ժողովն վերաբացուեցաւ «Ազատն Աստուածն» երգով, յաւարտ որոյ ատենապետն ի բեմ հրաւիրեց երկրորդ ատենախօսն, զՏիար Մկրտիչ Սարգիսեան:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Մեծ. ատենապետ և սիրեցեալ եղբարք,

Այս մեծ և ոգեւորեալ ժողովոյ առջեւ խօսիլ թէպէտ պատիւ կը համարիմ ինձ, կը զգամ նաև խօսելու դժուարութիւնն, մանաւանդ Մեծ. Տիար Վահագն Ապահունայ այնքան պերճախօս և խանդավառ ատենաբանութենէն յետոյ:

Եթէ անհռանդ և անզգայ ժողովոյ մի առջեւ խօսելու կոչուէի, պիտի ուզէի զգացումներն վառել և եռանդ արծարծել, բայց երբ կը դիտեմ ձեր ամենուն բոցափայլ աչքին որ ձեր սրտից հուրն կ'արտափայլեն, աւելորդ կը համարիմ ջանալ ջնուցանել արդէն ջերմագին ձեր սրտեր:

Ջերմութիւն կայ աւելի քան բաւական, թող սփռուի նաև լոյս: Երանի՛ թէ այնքան լուսափայլ լինէի ես որքան հրացայտ եղաւ նախորդ ատենախօսն: Եւ

ինչի՛ն թէ լուսաւորն ալ փառաւորին պէս ընդունելի լինէր, իմաստասէրք կ'ասեն թէպէտ՝ թէ մարդիկ աւելի կը սիրեն փառք քան թէ լոյս:

Տիար Ապահունայ ատենախօսութիւնն լսելէ յետոյ անհնար կը զգամ թօթափել անոր խորին տպաւորութիւնն իմ վերայէ և խօսիլ ինչ որ առաջուց պատրաստած էի: Անխուսափելի հարկ կը զգամ խօսիլ այդ ատենախօսութեան վերայ:

Ինչ որ մեր պերճարան Հայրենակիցն ասաց Բ. Դրան ապիկար և զեղծ կառավարութեան մասին, խորապէս ճամարիտ է և անուրանալի: Օսմանեան պետութիւնն կրօնական մանաւանդ քան քաղաքական կազմակերպութիւն մ'է, և նորա դործին եղող կառավարութիւնն յուէտ աւագակային դրութեան կը նմանի քան վարչական: Պաշտօնեայք կը թուին ոչ թէ օրէնքներն ի գործ դնելու այլ կոխտելու պաշտօն ունենալ, և աւելի կը պատժեն օգտակար մարդիկն քան սճրագործներն: Նաև անուրանալի է թէ կառավարութիւնն շարունակ արգելքներ գործելով հայ հպատակացն առջեւ՝ կը հնարի խոչընդոտել նոցա յառաջդիմութիւնն: Իրաց այս ահաւոր վիճակն դարման կը պահանջէ, և դարմանն, այո՛, համոզուած եմք թէ լոկ աղաչանօք չպիտի մասուցուի մեզ: Միայն գրիչ կամ միայն շրթունք չարժեքով չեմք կրնար հայկական գաւառաց վիճակն բարեկարգել, պէտք է շարժումք նաև մեր բազուկներ: (ծափ.)

Թուրք կառավարութեան վատթարութեան մասին ինչ որ ասաց ատենախօսն, ամեն Հայու ծանօթ, ամեն թրքահայու չօշափելի ճամարտութիւն է: Եւ այդ պատճառաւ իսկ կը կարծեմ թէ Հայոցք մէջ քաջ սերտուած այդ դասն շարունակ յեղյեղելու ժամանակն անցած է, անցնինք երկրորդ և աւելի՛ դժուարին դասին:

Եւ ո՞րն է աւելի դժուարին դասն: Խօսելու դասն չէ այն, այլ լռելու դասն: Ազատ երկրի մէջ ժողովն ազատ է, խօսքն սպաս է, և մեք կրնամք յեղափոխութիւն, սո՛ւր և այլն աղաղակել և որոտալ թրքաց դէմ, բայց պէ՞տք է միթէ որ մարդ խօսի ամեն ինչ որ խօսելու ազատութիւն ունի: (Շշուկ:) Ֆրանսացի հեղինակ մի ասացած է թէ խօսքն անո՛ր համար տրուած է մարդուն որ կարենայ իւր խորհուրդներ անով ծածկել: Պարտէր

յաւելլու «բաց ի հայ մարդէն» որ տղայ է դեռ, և իւր բոլոր խորհուրդներ տըխմար շատախօսութեամբ կը հռչակէ աշխարհի: (Քրթմնջիւն:) Այս խօսքեր դժգոհութիւն կը պատճառեն ձեզ. պէտք է ձեզ միշտ այնպիսի բաներ ասել որ ծափ զարնէք շարունակ (շշուկ): Պէտք է ձեզ զբօսցունել այլանդակ խօսքերով: (Շշուկ:) Պէտք է ձեզ ազգաց ու ազանց քան զամենայն սքանչելի կոչել: Պէտք է ասել թէ դուք Գերմանացոց, Ֆռանսացոց, Անգլիացոց, Ամերիկացոց առանձին գերազանցութիւններն բոլոր ունիք. թէ մեր զօրավարաց, թագաւորաց և անցեալ յառաջ հաւասարն չէ եղած. թէ մեր քաղաքակրթութիւնն քան զամենայն հնագոյնն է. վերջապէս պէտք է ասել ձեզ թէ յեղափոխականք մեր ահագին ուժերուն շափն տալով սարսեցուցած, ոռակացուցած, դողացուցած են Օսմանցիներն. և որպէս թէ հոս մեք զօրաց դունդ լինէինք, և թշնամեաց վերայ յարձակելու ժամուն պատէինք, և ատենախօսն եղած լինէր մի նոր վարդան, զգունդն քաջալերելու համար պատերազմական ճառ խօսելու պէս խօսէր. որ դուք աւորտընդոստ ծափահարութիւններ անէիք, դիրքացունէիք այս սրահն և կարծէիք թէ կը դըզդացունէք օսմանեան պետութիւնն և կը թնդացունէք Եւրոպա: (Քրթմնջիւն և կամօք)

ՉԱՅՆ ՄԻ— Այս խօսքեր ազգասէր մարդու խօսքեր չեն. դուք սրտերը կը չփոթցնէք:

Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Սրտերն չփոթեցունելու խօսք խօսիլ չէ իմ բաղձանք, և կը ցաւիմ եթէ խորհուրդներն պարզելու փոխանակ կը չփոթեցունեմ: Եթէ չէք կարող միտ դնել ինձ, կը նստիմ լռիկ:

ԱՏԵՆԱՊԵՏՆ.— Տխա՛ր ատենախօս, շարունակեցէ՛ք, միայն թէ կը խնդրեմ որ պարզ խօսիք որ ժողովուրդն յաւ իմանայ:

Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Չգիտեմ ինչպէս խօսիմ որ պարզ լինի: Պարզ բան մի ասացած չեմ լինիր երբ կ'ասեմ թէ ամեն խօսք խօսելու յարմար տեղն ու դէպ ժամանակն ունի: Ասկէ հինգ կամ տասն տարի առաջ կրնար ոք պատշաճութեամբ գրգռիչ ատենախօսութիւններ անել և արթնցունել թմրածներն. բայց այժմ որ անթնցած են, ուրիշ բան անելու կարգն եկած է: Նաև, միթէ չհասկանալի բա՛ն մի

ասացած կը լինիմ երբ դիտել կուտամ թէ ասկէ 5 կամ 10 տարի յետոյ խօսելիքն այսօր խօսիլ օգուտ չունի, քննառնի: Թերեւս տարիներ յետոյ, բաւական պատրաստութիւնէ յետոյ, մի զօրավար բազմ ունենայ հայ յեղափոխական զօրաց խօսիլ, յարձակման պահուն և ասել. Որդիք քաջաց, ժամ է որ ապացուցանէք գործով թէ արդարեւ սերունդ դիւցազանց էք: Զարկէ՛ք այն բազկաւ ուր վեհից արիւնն կ'ընթանայ. դողացուցէք ձեր ահագին հարուածոց տակ այն անօրէն և անխիղճ կառավարութիւն որ արհամարհեց աղաչանք և ծաղրեց մեր արտասուք: Թափեցէք արիւն, թող փրկուի հայրենիք, թող ապրի՛ Հայութիւն: (Ուժգին ծափ.)

Եղբայրներ, զօրաց առջեւ խօսելու ճառն, պատերազմի նախորդ ժամուն անելու ատենախօսութիւնն այստեղ անել և ծափահարել տարածամ է. անդէպ է կ'ասեմ, կը հասկանա՞ք: Եթէ ասէի սըղայութիւն է, պիտի ցաւէիք. եթէ ասէի ծաղրելի և քննասկար դրօսանք մ'է, պիտի սրտմաշէիք: (Քրթմնջիւն:) Եթէ այս ամենն զբօսանք չեն՝ ինչ են: Կը խնդրեմ դուք ասէք թէ ինչ կ'անեմք մեք այս ժողովներով: Ամեն անգամ որ այստեղ ատենախօսք Սո՛ւր, Դաշո՛յն, Դրօ՛շ ասեն, դուք սաստիկ կը ծափահարէք, իսկ երբ ոք հըրաւիրէ զձեզ որ Սուր, Դաշոյն, Դրօշ առնուք և գոյնս գործածելու վարժուիք, կը քաշուիք անկիւններն: (Ծիծաղ:) Ինչ քաշանք չի յեղափոխականներ: (Շշուկ:) Դուք ուրեմն լաւ հաւատացած էք անոնց որք կ'ասեն թէ զօրաց և պաշի պօզուգի և զինեալ խուժանի դէմ դնելու համար պէտք չկայ զէնքի վարժութիւն ունենալու: Ուրեմն կը հաւատա՞ք թէ ձեր եղունգներով սրի դէմ պիտի ելնէք ու ձեր սաստկամայն ծափիւք դէմ պիտի դնէք թնդանօթներու (ծիծաղ և շշուկ:) Կը հաւատա՞ք իրօք թէ այսպէս երգ երգելով, ճառ խօսելով, ծափ զարնելով, ի մի բան, այսպէս քէ՞ծ անելով հայրենեաց կը ծառայէք կամ ծառայելու կը պատրաստուիք: «Ո՛հ, փշոտ է ճանապարհ», ճանապարհն ազատութեան, կ'երգեմք, և սակայն հեշտ ճամբէն դուրս ելնել չեմք ուզեր: Տարիներէ ի վեր մեր ձեռքեր քաջ վարժուեցան ծափ զարնելու, թող այժմ սովորին ճշմարիտ դասն. դժուարին բայց օգտակար դասն. այսինքն հրացան բռնել, հրա-

ցան արձակել, սուր գործածել, սուին վարել...: Շատ լաւ սովորած եմք աթոռներու վերայ բազմիւ, և քաղցրալուր գովեստներ լսել. սովորիմք այժմ ոտքի վերայ կենալ, ուղիղ կանգնիլ, ուշադրութեամբ քալել, ծնրադրել, վազել. սովորինք ինքնապաշտպանութեան արհեստն, զինուորի դժուարին արհեստն...:

Դադրեցունե՛մք ուրեմն մեր այս աղմկալից հնացեալ ժողովներն, և մէկ տեղ գանք այսուհետեւ զինավարժութեան համար. քէ՛ծ շատ արինք. քիչ մ'ալ զինուորութիւն անենք. խօսքի ժողովներն վերջացուենք, և մարզանքի ու կրթութեան ժողովներն սկսինք: Յեղափոխութեան վերայ ճառ խօսիլ ու ծափահարելէն դադրինք, մեր խօսքերն մեղմ, հանդարտ, խաղաղ թող լինին (շշուկ), մեր բազմակներ թող հզօր, կիրթ, զինավարժ լինին:

Մանաւանդ կարգ մի ազգայիններ կան մեր մէջ որ դժգոհութեան նշաններ կուտան երբ ծափ գրգռելու բնութիւն չունեցող խօսքեր կը լսեն: Ուռուցիկ խօսքերն միայն աւելն կը բերեն և պայթուցիկ գործերն միայն ուրախութիւն կ'առթեն նոցա. ուռուցիկ խօսքեր ազատ երկիրներու մէջ, և պայթուցիկ գործեր ի Թուրքիա: (Մաստիկ քրթմնչիւմ)

ՁԱՅՆ ՄԻ— Ինչ ասել կ'ուզէք Պարոն, մեզ նախատեսցիք ու հիմա ալ մեր անձնուէր հերոսները կը նախատէք:

Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ո՛չ, ո՛չ, դուք զարմանալի կերպով սխալ կը մեկնէք իմ խօսքեր. ես ոչ զոք կը նախատեմ: Պայթուցիկ գործերու ակնարկեցի, և սակայն բնաւ միտք չունէի անոնց մասին խօսիլ. ես այժմ արտասահմանեան, մասնաւորապէս Ամերիկայի Հայոցն ընթացքին վերայ կ'ուզէի խօսիլ: Ոչ թէ վասն զի Թուրքիոյ մէջ կատարուող շարժումներուն նկատմամբ մասնաւոր ասելիք չունէի, այլ վասն զի կը վախէի թէ ամեն ինչ որ այն մասին ասեմ, փոխանակ լսաստորելու պիտի գրգռէր զձեզ: Կը յուսամ թէ Ամերիկայի Հայերն յորդորելով որ ուռուցիկ խօսքերու դիւրին զբօսանքն հերիք համարին և դժուարին ու օգտակար դասն սկսին՝ զիրենք ոչ թէ անարգեցի, այլ յարգեցի: Եթէ ժամանակն ներէր, թերեւս կը յաջողէի նոյնպէս ցուցնել թէ հերոսներն նախատելէ շատ հեռու եմ ես երբ պայթուցիկ գործերու դէմ կը խօսիմ: Հայոց նո-

րածին քաջութեանն լաւագոյն բարեկամն է նա որ կը յորդորէ քաջութիւնն արդար և գովելի կերպիւ ի գործ դնել և զայն արատաւորումէ պահել: Մայր մի կրնայ իւր զաւակ յոյժ սիրել և սակայն այնպիսի անմարտելի կերակրով ծանրաբեռնել նորա ստամոքս որ բորբոքում յառաջ գայ և երախայն մեռնի: Ազգն սիրելն ալ խելքով պէտք է լինի: Զկարծեմք թէ ազգ մեծցունել տղայ մի մեծցունելէն ալ դիւրին է: Ռամիկ երկրագործն անգամ գիտէ թէ արտն որքան աւելի խորէն հերկուի, այնքան աւելի դիմացկուն և առատ կը լինի սերմին հասկն: Հայ ցեղն ալ շատ ընդունակ ցեղ մ'է բայց իւր ընդունակութեան բոլոր խորութեամբ հերկուած չէ դեռ. մէկ մասն միայն և այն ալ հարեանցի հերկուած է. մեծագոյն մասն դեռ բոլորովին անմշակ կը մնայ: Ուրեմն, կ'ասեմ նորա ներքին հիւթերն դեռ չատ ազգասիկ են, և եթէ չափազանց ջերմութեան ենթարկուի հայկական վերածնութեան ծիլն կրնայ չորնալ: (Քրթմնչիւմ): Հայկական վերածնութեան ծաղիկն դեռ յոյժ նորափթիթ ու փափուկ է, մեծ անխոհեմութիւն է գայն ենթարկել սաստիկ փոթորիկներու. զի ծաղիկն կրնայ տարածամ թօթափիլ և անպտուղ մնալ: (խառնաշփոթութիւնք և կամօք):

ՁԱՅՆԵՐ.— Վար՛ իջիր, լռէ՛, հերիք է:

ԸՆԶԱԿ ԱՐՇԱՐՈՒՆԻ.— Կը բողբոքեմ Սարգիսեանի բոլոր խօսքերուն դէմ: Ասունք ժաղովուրդին միտքը պղտորող խօսքեր են: Նոր միաբանած է ազգը և յեղափոխական գործը առաջ կ'երթայ և ծանր դերութեան չլթաները կը կտրին, աս մարդը յեղափոխութեան դէմ կը խօսի սկսեր է և կ'աշխտի միացեալ սրտերը քակել որք առաջ եկած են անմեղ արեամբ:

Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Դուք ինչ բաներ կ'ասէք: Իր՞աւ այդքան պարզամիտ էք թէ պարզամիտ կը ձեւանաք: Յեղափոխութիւն պռալու դէմ խօսիլ և յեղափոխութեան դէմ խօսիլ մի և նոյն բանն է եղեր:

ՁԱՅՆ ՄԻ.— Այ՛ո, մի և նոյն բանն է:

Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Կեցցէ՛ք քաջ հասկացողութիւնդ: Ուրեմն եթէ ասեմ թէ յեղափոխական շարժումն շիտակ ճամբէն դուրս ելեր է, հարկ է անցեալ ձախող

փորձառութենէն օգուտ քաղել և աւելի իմաստուն ուղղութիւն տալ յեղափոխական գործին, դուք պիտի այնպէ՛ս հասկանաք թէ...

Ը. ԱՐՇԱՐՈՒՆԻ.—Թէ դուն ես կատարեալ մատնիչ՝, Մերո՛ւ ժառն, կրակի մէջ կարմրած շամբուրէ խաչածեւ պսակը ճակատիդ վերայ դնելու է։

ՁԱՅՆ ՄԻ.—Մերութան դո՛ւ ես։

Ը. ԱՐՇԱՐՈՒՆԻ.—Հիմա գաւազանիս ծայրովն կը ցուցնեմ որոնց ճակատին կը վայելէ կրակէ շամբուրը։

—Արշարունի յարձակեցաւ գաւազանով զարնելու և ահա սոսկալի աղմուկ և յուզում սկսաւ, ամեն ոք ոտքի վերայ ելած էր և ամեն մարդ կը խօսէր կը պոռար, կը կանչէր։ Ձեռքեր վեր վերցան, աթոռներ կոտորեցան, բռնցի ու գաւազանի հարուածներ փոխանակուեցան։ Ոմանք փութիւն՝ կը կանչէին, այլք ամօթ է կ'աղաղակէին, լռեցէ՛ք, նստեցէ՛ք։ Ժխորն ահաւոր երևոյթ կ'առնոյր, թրքական գռնհիկ հայհոյանքներ կ'արձակուէին ոմանց շրթունքներէն, և չարաչար կռուոյ մի բոլոր ողբալի հետեանքն կը գուշակուէր երբ յանկարծ բեմին վերայ երևցաւ յաղթահասակ, ալեւոր, պատկառելի ծերունի մի և որոտաց

Խաղաղութիւն՝։

Ամեն ոք իքթթել ական դարձած էր դէպ ի ծերունին։ Որպէս արտի մի հասկերն կը ծռին հովի առջև, այնպէս ամեն ոք երկնաշունչ բարբառի մի առջև խոնարհած լսիկ նստաւ իւր սեղ, և տիրեց խորին լռութիւն։

Ոչ ոք նշմարած էր Ծերունւոյն ներկայութիւնն ի ժողովին, սակայն ամեն ոք կը թուէր ճանաչել ձայնն որպէս ոչխարք կը ճանաչեն դձայն հովուին։

ԲԱՆՔ ՎԵՂ ԾԵՐՈՒՆԻՆՈՅՆ

«Ու՛մ մմանցուցից զազգս զայս. նմամ է մամկտույ»։

Ժողովուրդ, Տէրն մեր Գրիստոս Յիսուսի խօսքն զարմանալի կեպով կը պատշաճի մեր ազգին։ Դուք ամենդ մանուկներ էք։ Լսեցի ձեր ճառեր, ձեր աղմուկներ, և տեսայ ձեր կռիւն։ Ունի յատենախօսութեան իւրում «գարկէք» ասաց, և դուք կարծեցիք թէ իրարու գարկէք ասաց (ծիծաղ)։ Շատ պարզ խօսքեր դուք սխալ կը հասկանաք։ Միայն

դուք չէք, մեր բոլոր Հայ ժողովուրդ մանուկ է դեռ, ի ստորոտս Վարազայ ինչպէս ի ստորոտս Մասեաց, յափունս Պոսֆորի ինչպէս առ եզերք Ատլանտեանի։ Ժողովուրդ այն պարզամիտ հաւատք ունի թէ մեծերն կարող են հրաշալի գործել կատարել յանկարծ։ Թէ կրնան ազգ փրկել, հայրենիք փրկել մէկ խնդիրքով կամ մի քանի հարուածով։ Ժողովրդի մեծ տկարութիւնն է այդ։ Ես յիսուն տարիէ իվեր կ'աղաղակեմ թէ հայրենիք փրկել ազգ կրթելով, լուսաւորելով կը լինի։ Դուք այս բան տակաւին իմացած չէք։ Դուք կ'ուզէք որ դուք չփոխուիք չլաւանաք բայց ձեր վիճակ փոխուի լաւանայ։ Շատ կողմերէ շատ ձայներ կը լսէ ժողովուրդ, ամեն կողմէ կը հրաւիրեն զինքն ասելով եկուր իմ ետեւէս, ես քեզ կը տանիմ Բանան։ Ձեզ խրատ կուտամ զանազանէք ուղիղ առաջնորդն մուրեհալէն։ ան որ կ'ասէ թէ կրնայ ձեզ աղատել սուանց ձեզ կրթելու, գիտցէք թէ նա սխալ կ'առաջնորդէ։

Սիրելիք, մասնաւորապէս ազատ երկրի մէջ բնակողներդ լա՛ւ սերտեցէք աղատութեան դատ, և իմացէք թէ ազատութիւն ասել ինքնավարութիւն ասել է։ Ազատութիւն օրէնք և կառավարութիւն չճանաչել չէ։ ազատ ժողովուրդ այս ինչ անհատի կամքին չի հպաաակիր, բայց և այնպէս կը հպատակի օրէնքի, այն օրէնքի որ ինքն ընտրած է իբրեւ լաւագոյն օրէնք։ Ուրեմն դուք պէտք է գիտնաք թէ ազատութիւն գտնել՝ պարանոցն օրէնքի լծէն ազատել չէ, այլ ինքնօրինութեան լուծին պարանոց խոնարհել է։ Ձլինի՛ կարծէք թէ ինքնօրինութիւն ինքնամօրիմութիւն է։ Ուրեմն եթէ իրօք կը բաղձաք ազատութեան արժանանալ, ձեր խիստ պարանոցներ ձկեցէք օրէնքի առաջ։ ձեր լեզու զսպել սովրեցէք. քաղաքավարութեամբ խօսիլ սովրեցէք. լռել սովրեցէք։ Իմացէ՛ք թէ ինչ է ճշմարիտ քաջութիւն. քաջութիւն հաշոյել չէ, խիստ խօսիլ չէ, ժողով խանդարել չէ, կարծիքի ասարբերութեան չներելով ժողովոյ մէջ կռիւ անել չէ։ Միթէ կը կարծէք թէ երբ Հայեաստնի մէջ ինքնօրին լինիք, դիրար ծեծելու և մորթելու համար ինքնօրէն պիտի լինիք։ (ծիծաղ) Դուք իւրաքանչիւրդ պատուական էք. սովրեցէք իրար վայելել։ Մարդիկ իրարու ընկերութեան

կարօտ են, իրարու կը պարտին իրենց եր-
ջանկութիւնն և յառաջդիմութիւնն. բայց և
այնպէս միմեանց արժէք չեն իմանար.
մարդոց մեծ ապերախտութիւնն է այդ:
Որքան ալ բարձր ենէ մարդ, կարօտ է
ընկերի: Գիտէ՞ք ինչ զգացում ունեցաւ
ձէյմս Պրայս երբ մեծ նեղութեամբ ելաւ
հասաւ Մառիսի գազաթ: Վախցաւ, զի
առանձին էր: Զկար իւր մօտ ոչ մի արա-
րած, ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ կրնար լսել:
Այդ կատարեալ մենակութեան մէջ եր-
կիւզ պատեց զինքն: Որքան աւելի քա-
ղաքակիրթ լինի մօդ, այնքան աւելի ըն-
կերական կը դառնայ: Երբ մէկտեղ գաք,
զիրար կը վայելէ՞ք, իրարմէ կ'ախորժի՞ք
թէ ոչ այդ բաւական է ցուցնելու ձեր
քաղաքակիրթութեան աստիճան:

Գիտութիւնն օգտակար բան է, քաջու-
թիւնն սքանչելի է, դրամն հզօր է. բայց
մի բան կայ աւելի օգտակար քան զգի-
տութիւն, աւելի՛ սքանչելի քան զբա-
շուրթիւն, աւելի՛ հզօր քան զհարստու-
թիւն—այն է Սէր: «Գիտութիւնն հպար-
տացուցանէ, Սէր շինէ»: Քաջ մարդ
ինքզինք կրնայ զոհել, բայց եթէ չզոհ-
ուի սիրով, այն ալ անօգուտ է: «Եթէ
մատնիցեմ զմարմինն իմ յայրումն, և սէր
ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ»: Դրամ գոհել լաւ
է, բայց «Եթէ ջամբիցեմ զամենայն ինչս
իմ աղքատաց, և սէր ոչ ունիցիմ, ոչ
ինչ եմ»:

Սիրելի ժողովուրդ, ես ձեզ կասեմ
ուրեմն թէ անօգուտ են ձեր ճառեր, ձեր
գիտութիւն, ձեր քաջութիւն, ձեր զոհո-
ղութիւն, ձեր կախուիլ, ու ձեր մեռնիլ,
եթէ Սէր չունիք: Սիրով պիտի փրկէք
ազգ ու հայրենիք: Գիտութիւն, հարս-
տութիւն, քաջութիւն և սուր խիստ հզօր
են, բայց՝ առանց սիրոյ՝ կրնան քակելու
և կորուսանելու միայն ծառայել, իսկ սի-
րով՝ կը ծառայեն շինելու և փրկելու:

Ահ՛, երանի՛ թէ հասկանայիք, սիրելի
որդեակք իմ, թէ գիտութիւնն կը բաժնէ
զձեզ և կը տկարացունէ, թէ սուրն զձեզ
կոտորելու կը ծառայէ՝ եթէ չունիք Սէր:
Սէրն է և ոչ գիտուն թէորին կամ խո-
րին քաղաքականութիւնն որ զձեզ միա-
ցունելով մէկ մարմին ու մէկ հոգի
պիտի անէ Ո՛չ, մի՛ յանդգնիք խօսիլ
ազգ փրկելու վերայ եթէ սէր չունիք.
մի՛ յանդգնիք ընկերութիւն կազմել,
միութիւն և կեդրոնացում ջատագովել

եթէ սէր չունիք. ինչքան գիտութեամբ
ալոր խօսիք, ինչքան քաջութեամբ ալ որ
գործէք, գիտցէք թէ ազգի կործանման
կ'աշխատիք եթէ չունիք սէր: Եւ մի՛ խա-
բէք դուք զձեզ ասելով թէ կը սիրէք ազգ
քանի որ չսիրէք զիրար: Այս է պատուէր
իմ որ սիրէք զմիմեանս եթէ կ'ուզէք սի-
րել ազգ: Սիրեցէք տգէտն ալ, տիմարն
ալ, սիրեցէք աղքատն ալ, թշնամին ու
հակարակորդն ալ: Ոխ մի պահէք. անյի-
շաշար եղէք: Իրարու թերութեանց ներող
եղէք: Իրարու վերայ դուրգուրացէք, ի-
րարու քաղցր, անոյշ խօսեցէք, միմեանց
պատիւ արէք. այդպէսով դուք իրար կը
լուսաւորէք, իրարու հասկանալի կը լի-
նիք, կը համաձայնիք, կը միաբանիք և կը
զօրանաք: Դուք այսպէս անշո՛ւշտ կը փր-
կէք ազգ: Իմ վերջին խօսք, իմ բոլոր
խրատ այս է. ներեցէք իրարու, սիրեցէ՛ք,
սիրեցէ՛ք, սիրեցէ՛ք զմիմեանս:

Եւ վեհն անդէն աներեւոյթ եղաւ:

Եւ բոլոր ժողովականք ինկան իրենց
երեսի վերայ և լացին լալիւն մեծ: Քար
սրտերն անգամ ճմլուած էին Ծերունուն
սիրովն, և այն արտասուք որ ամենուն
աչքէն կը հոսէր, զղման և սիրոյ արտա-
սուք էր: Լացն ու հեկեկանք կամաց կա-
մաց հանդարտելով, ներկայք ոտքի ելան,
և սիրալի տեսարան մի բացուեցաւ, համ-
բոյր սիրոյ կը փոխանակէին ամենեքին, և
անոնք որ պահ մի առաջ իրար ցաւցու-
ցած, իրարու զարկած կամ զիրար քնա-
դատած էին, իրարու ձեռք ջերմադին
համակրութեամբ կը սեղմէին: Սարգի-
սեան և Արշարունի ջերմ սիրոյ արտասուք
թափելով ողջագուրեցին զիրար: Ամենե-
քին սիրելի եղբայր կը կոչէին զմիմիանս
և իրենց սրտառուչ ձայն ու քաղցրահայ-
եաց աչեր կը վկայէին թէ խորապէս ան-
կեղծ էին: Այլ ո՛չ թշնամի կար, ո՛չ վատ
ո՛չ ատելի: Սիրոյ յորդահոս հեղեղ մի
սրբած տարած էր ամեն ոխ և հեռ և դա-
ռն յիշատակ:

Մեծ և պզտիկ, գիտուն և անգէտ
քաջ ըմբռնած էին փրկաւէտ ճշմարտու-
թիւնն թէ միութիւն, ազգային կեանք
կամ հայրենեաց վերածնութիւն անհնար
է, ցնորք է առանց Սիրոյ: Անճառելի
բերկրութեամբ կը տեսնէին հայկական Սի-
րով փառահեղ արեգն ծագեալ ի հորիզո-
նն Հայ Աշխարհին: Սէրն գիտէին հիմն ու

խարիստ ամենայն ազգաշէն գործողութեան, և միայն սիրով ներշնչեալ ժողովն, ընկերութիւնն, անձնութիւնն ու զոհն կը ճանաչէին գործ ճշմարիտ հայրենասիրութեան: Յրուեցաւ ժողովուրդն կէս գիշերէն շատ յետոյ, բայց ամենուն սիրտն իրարու կապուած մնաց: Ամենն ալ փոխուած էին, և իրենց սրտի դրօշակն ուր Սուր միայն գրուած էր, այժմ ուղղուած ամբողջացած և եղած էր

ՍԷՐ և ՍՈՒՐ

ՆԵՄՆԿ ՎԼՆԵՆ

ՍՈՎԻԵՏԻԿՆԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Վան, 20 Սեպտ. 1893

Տէր,

Այս ձմեռ յոյժ սոսկալի պիտի լինի ժողովրդեան վիճակ: Գեռ կալի վրայ է, բայց ոչ ցորեն կ'երեւնայ և ոչ ալիւր: Երեւնայ ալ չափը (40 քաշ վառայ հաւասար է 50 քաշի Պոլսոյ) 56—60 դահեկան է, սն ալ կռիւով հազիւ կարելի է ձեռք բերել: Կալերուն վրայ զօրք կայնած է, մարդ գլուխ միայն մէկ չափ ցորեն կուտան թէկուզ մարդուն տունը 20 հոգիէ բաղկացեալ լինի: Ուրիշ դժբաղդ հանգամանք մ'ալ այն է որ այս տմառ անողորմ կերպով չոր լինելով, ցորեն այրած է, բնաւ հաց չի լինիր, կը լցուի թոնիր: Ուրիշ ամեն բաներ նմանապէս թանկ են այս տարի, և օր աւուր վրայ կը դնէ շատ վախ կայ որ 1880ի սոսկալի սովին նման լինի, այն ատեն ժողովուրդն ստակ ունէր ի ձեռին, և կարողացաւ դիմանալ, բայց այժմ աղքատութիւն անասելի կերպով տիրած է և մեծ կոտորած պիտի լինի: Այն ատեն ազգին աէր տիրական կար. Խրիմեան Հայրիկ, Ռուսական հիւպատոս Կամսարական, Գարեգին եպ. Սրուանձտեանց, Մկրտիչ Փորթուքալեան, Սեդրաք Տէվկանց և այլք, նաև անգլիական գործիչ Բլէյթըն և դեր-կուսակալ Աղաթոն Մկրտիչ, երբ միջազգային յանձնաժողով մը այնքան մեծ ճիգեր արու սովին արհաւիրքը մեղմացունելու: Բայց այժմ ժողովուրդը միայնակ է, ցուրկ ամեն պաշտպանութենէ և օգնութենէ. և աւագ, այս անգամ սով մը կրնայ վասպուրակաւ մուխն ի սպառ մարել...

* * *

ՆԱՄԱԿ Ի ԿԵՍԱՐԻՈՅ

Կեսարիա, 21 Սեպտ. 1893

Քէփէնէկեան Գրիգոր Աղայի որդին Կարապետ, որ դպրոցական պատանեակ մ'է, անցեալ օր հօրն խանութին առջեւ դրուած սնտուկին վրայ թուրք մի նըստած տեսնելով, կը խնդրէ որ ելնէ անկէ (կ'երեւի թէ սնտուկն բանալ պէտք է եղեր): Այս խնդրքի համար սաստիկ կը բարկւնայ թուրքն և ահագին հարուած մի սալով պատանոյն փորին՝ գետին կը զարնէ զայն: Խեղճ Կարապետ մի քանի օրէն մեռաւ:

Ճիգուիթներուն և Թրքաց միջեւ ալ կռիւ տեղի ունեցաւ: Կռուոյն ախոյեանն էր Շէյխ Իպրահիմի փեսայն Սամի, որ Թրքաբար հայհոյեր և նախաւեր էր Ճիգուիթներն նոցա նոր շէնքին առթիւ: Նախատեալ օտարականքն էնկիւրիի վալիին բողոքեցին՝ փոխանակ դեպաւնատան դիմելու: Վալին հեռագրով հրաման յղեց թէ պէտք է արդարութիւն ի գործ դնել այս դէպքին մէջ:

Բռնաբարութեան դէպքերն շատ յաճախեցին այս յուզեալ ժամանակներս: Թրքերն պղտոր ջրին մէջ որս կ'անեն: Իրենց որսն է դրամ և հաճոյք: Որնչև անգամ չորս տարեկան տղայ պղծեցին: Յոյն տղայք ալ գերծ չեն մնար թրքական այս անասելի նախատինքէն: Այս գարշելութեանց մէկ դէպքին մէջ հեղինակներն էին Չուլազ Օզլի Ահմէտ, Չէօմէկ Օզլի Ահմէտ և Ավրատ Օզլի Հասան: Սոցա երկուքն բանտարկուեցան բայց երեք չորս օր վերջ արձակուեցան ազատ...

Հարստահարութեանց այս անսովոր սաստիկութիւնն գործերն բոլորովին խանգարեց. քրիստոնեայք փողոց երթալն անգամ իբրեւ վասնգաւոր գործ յանձն կը առնուն: Ընտանիքներ սկսան գաղթել քաղաքէս դէպ աւելի ապահով կողմեր: Մէկ ընտանիք մի գաղթեց ի Պրուսա, ուրիշ մի ի Կ. Պոլիս և երրորդ մ'ալ ի Բեօսթէնէ:

* * *

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՋԱՏԱԳՈՎՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻՆ

ՕՐԻՈՐԴ ԱԼԻՍ Ս. ՊԼԵՔՈՒԷԼ

(Ազնիւ Օրիորդ ԱԼԻՍ ՍԹՈՆ ՊԼԵՔ-ՈՒԷԼ, ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻՆ անգլիէրէնի թարգմանողն, OUTLOOK թերթի Հոկտ. 28 թուոյն մէջ յօդուած մի հրատարակած է որոյ կրճատեալ թարգմանութիւնն հետեւեալն է ։)

«ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ»

Յոյժ պատուական թելադրութիւն մի է զոր «Աւթլուք» կ'անէ Հոկտ. 7ի թուոյն մէջ, թէ Ամերիկեան Նաւատորմիւ մի ներկայութիւնն յԱրեւելս աւելի պիտի նպաստէ մեր միսիոնարներն պաշտպանելու քան անթիւ դիւանագիտական ծանուցագրեր։ Արդեօք կարելի չէ՞ որ մի և նոյն ժամանակ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն որոշ ազգեցութիւն ի գործ դնէ Դրան վերայ յօգուտ քրիստոնեայ հպատակացն բարւոք կառավարութեան ։

...Քրոմուէլ առաց առթիւ մի թէ, «եթէ հարկ է որ ժողովուրդ մի կորնչի լաւ է որ կորնչի մարդոց ոչ թէ գազանամիտ արարածոց ձեռքովն»։ Մասնաւորապէս դժպէս է որ Հայոց նման ժողովուրդ մի, — նշանաւոր կերպով ուշիմ, և ունենալով հին քաղաքակրթութիւն և գրականութիւն, և քաջաբիկ աստիճանաւ մաքուր կեանք ընտանեկան — կորնչի ապուշ, անառնաբարոյ և դազանամիտ թրքաց ձեռքով ։...։ Շատ լաւ կը լինի Միացեալ Նահանգաց համար եթէ Քրոմուէլի գրքէն թերթ մի առնու, և բան մ'անէ դադրեցունելու համար հալածանքն Հայոց, զորս Լամառէին «Արեւելից Չուրիցերիացիներն» կոչած է, որպէս և Տիկին Պրաունինկ քաջ կ'ասէ ։

Երջանիկ եմ ամենայն ժողովուրդք որք հզօր եմ իրենց ազատութիւն պահպանելու համար ։

Այլ օրհոնալ յազգս եմ ա'յնոքիկ, որք կը հաւանքակիմ հզօր լինիլ մնացելսց հաւմար ։

Եթէ Միացեալ Նահանգաց կառավար-

ութիւնն ձեռնարկէ ինչ և իցէ բան մի անելու Թուրքիոյ մասին, յուսանք թէ ճնշումն ի գործ պիտի դնէ ոչ միայն միսիոնարաց այլ Սուլթանին բոլոր քրիստոնեայ հպատակացն ի պաշտպանութիւն ։ Տօրչէթլըր, Մաս. ԱԼԻՍ Ս. ՊԼԵՔՈՒԷԼ

Ֆ. Է. ՔԼԱՐԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

Կ'ԱՊՏԱԿԷ ԹՐԲԱՑ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՆՆ

Այդ ազնիւ ամերիկացին OUTLOOK ի Հոկտ. 28ի թուով կը հրատարակէ յօդուած մի, յորում քաջ կը նկարագրէ թէ որպիսի ծաղրելի և միանգամայն անհանդուրժելի աստիճանի հասած է այժմ Օսմանցւոց վայրագութիւնն ։ Երբեք յօդուածի կարեւորագոյն մասերն կը թարգմանեմք, որոյ խորագիրն է

ՅԵՐԿՐԻՆ ԲՈՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ

...Միսեօնարք չեն կարող պատմել ինչ որ գիտեն թուրքիոյ իրաց վիճակին նըկատմամբ, եթէ երբէք կ'ուզեն Սուլթանի երկրին մէջ շարունակել Աւետարան քարոզել ։ Այս ազնիւ մարդիկ ստիպուած են հանդարտ կենալ և հուռնանել ։

...Սակայն այս ամենն ասելէ յետոյ, անվիճելի իրողութիւն է թէ Տաճկաստան է աշխարհի վերայ քան զամենայն ողորմելի կերպիւ կառավարեալ երկիրն ։ Ծճմարիտ է թէ, եթէ երբէք ժողովուրդ մի ոտքի ելնելու և կառավարող դասերն ի բաց վտարելու բարոյական իրաւունք ունեցեր է, այդ իրաւունքն թուրքիոյ հպատակ ցեղերուն իրաւունքն է ։ Մեր նախահարց եղած անիրաւութիւնք աննշան գանգատի համեմատութիւններ կ'առնուն երբ բաղդատեմք զայն Սուլթանի հպատակաց գլխուն հանապազ տեղացող ժանտագործութեանց հետ ։

Իրաց ներկայ վիճակին չքմեղանք չէ ամենեւին ասել թէ Թուրքերն ալ Հայոց և Յունաց հետ կը չարչարուին ։ Այդ կը յուզնէ միայն թէ որքան համատարած և խորարմատ է ներկայ կառավարութեան չարիքն ։ Միայն ջրհեղեղ մի կարող է ի բաց աւելել երկրիս երեսէն «հիւանդ մարդուն» իշխանութեան յետին մնացորդն և մաքրել Աւգեան ախտոներն ։

...Ոչ միայն ֆիզիքական թշուառութեան երկիրն է թուրքիա, այլ և մշտական արհաւիրաց և երկիւղի։ Ոչ ոք որ առաւօտուն անկողնէն կենէ, գիտէ թէ երեկոյն յիւր տունն պիտի վերադառնայ պառկելու թէ իրանա պիտի նետուի։ Գիտեմ որ նշանաւոր բողոքական երէց մի բազում ամիսներ տառապեցաւ Օսմանեան բանտին մէջ այն պատճառաւ որ խօսակցութեան մի մէջ ասացած էր թէ Սուլթանն սնանկացեալ է։ Հէք կին մի դիմեց այն միսեօնարին որ ինձ ուղեկից էր, և մեծ վշտահարութեամբ պատմեց թէ իւր էրկին, որ մեր բողոքական երիցանց մին է, աներեւոյթ եղած էր, թէ երեք ամիս բնաւ լուր չէին առած նորա մասին, և թէ ինքն ու իւր երախայ մնացեր էին ի սեւա չքաւորութեան։ Զգիտէր բնաւ թէ ուր էր իւր այր, կենդանի՞ արդեօք թէ մեռեալ, կամ եթէ ձերբակալուած էր, արդեօք ինչ յանցանքով։ Յայնմ հետէ լուր առի եւ թէ հինգ կամ վեց ժամի ի բանտի մնալէն յետոյ, արձակուած էր թըշուառ հովիւն, իւր միակ յանցաքն այն եղած լինելով որ իւր անցագրի մէջ ձեւական թերութիւն մի նշմարուած է։

Իմ բարեկամներէս մին Փրոֆ. Թումայեանի պատահած էր ճամբան, սորա մէկ բանտէ ուրիշ բանտ տարուելու միջոցին։ Պարանոցին և ոտից շուրջ դրուած էին ծանր չղթայք, որոյ բիրտ և անողորմ օղակներն, անասնոց համար գործածուածներէն աւելի կոշտ, կը կտրէին Փրոֆէսորին մորթն ամեն անգամ որ կառքն կը ցնցուէր։ Եւ այս է սովորական կերպն որով թուրքիա բանտարկեալք կը փախադրուին տեղէ տեղ։

Զարմանք չէ որ բիւրաւոր ժողովուրդք կ'աղաղակեն յուսահատ «Ո՛վ Տէր, միչ և ցերր, Ո՛վ Տէր։» Արդեօք Ամերիկայ և Անգլիա պատճառ չունին՞ բանտարկելոց հառաչանաց ականջ դնելու, և յանուն մարդկութեան խորտակելու այն չղթաներ որք այնքան ժամանակ կաշկանդած են զնա իմացական, հոգեկան և ֆիզիքական ստորնութեան մէջ։

Ֆ. Է. ԲԼՍՐՔ

ԱՄԵՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆ ՕՏԱՐ ԵԿՐԱՅ ՄԷՋ

Գրեթէ ամեն քաղաքակիրթ տերութիւն ընդունած է այն սկզբունքն թէ մարդ իրաւունք ունի իւր հայրենի երկրէն դուրս ելնելու կամ հայրենաթողութեան, և ուրիշ երկրի մի քաղաքացին ընդունուելու։

Քաղաքացութեան ընդունուած անձ մի երբ իւր հին հայրենիքն վերադառնայ՝ հոն ինչպէս պիտի նկատուի, այդ վիճաբանեալ խնդիր մէ։ Եթէ այդպիսին իւր նոր հայրենեաց վաճառական նաւուն մէջ գտնուի, տակաւին իւր նոր հայրենիքի հողին և իրաւասութեան սահմանին մէջ կը համարուի։

Միացեալ Նահանգաց Արտաքին Գործոց նախարարութիւնն յառաջագոյն քան 1859 թուականն աւելի քան մէկ դէպքի մէջ, մերժած էր պաշտպանել Բրուսիոյ կամ ուրիշ երկրաց բնիկներն որք այս երկրին մէջ քաղաքացութեան ընդունուած լինելէ յետոյ վերադարձեր էին իրենց ծննդավայրն, և որք բռնադատուած էին զինուորական ծառայութիւն անելու։ Սակայն պետական Քարտուղար Գաս 1859ին, տարբեր սկզբունք մի հաստատեց, որ այն ժամանակէն իվեր երկրիս պետական իշխանութեանց միօրինակ սկզբունք է։ 1860ին Նախագահն յայտարարութիւն մի ուղղեց Խորհրդարանին հաստատելու թէ մեր կառավարութիւնն պարտաւոր է իւր որդեգրեալ քաղաքացիներն պաշտպանելու ամեն տեղ։ Այս վարդապետութեան համաձայն վարուած է կառավարութիւնն 1860էն իվեր, և բազում դաշնագրութեանց մէջ վաւերացուած է։ Այս մտօք դաշնագիր կնքուած է Միացեալ Նահանգաց մէկ կողմանէ և Գերմանական դաշնակցութեան (1868), Մեծին Բրիտանիոյ, Պէրսիայի, Մեքսիքոյի, Տանիմարքայի, Շուէտի, Նորուէլիոյ և Հարաւային Ամերիկայի մի քանի տերութեանց միջև՝ ի միւս կողմանց։

Թուսիա որ հայրենաթողութեան իրաւունքն չի ճանաչեր, առանց մասնաւոր հրամանի - և Զուեցերիա եղած են գրեթէ միակ երկիրներն (որոց պանտախաներն յաճախ կը գտնուին ի Միացեալ Նահանգս) որք ձեւապէս համաձայնած չեն

թէ որդեգրեալ քաղաքացւոյ մի կրնայ պաշտպանութիւն ընծայուիլ իւր նոր հայրենիքի իշխանութենէն անդր քան ժամանակաւոր բնակութիւն մի իւր ծննդավայրին մէջ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

«... Սէլամըքը իւր առջի չքեղ հանգիստութիւնն չունի. Ապտ-Իւլ-Համիտ կ'երթայ պարզ կառքով: Հաւատացելոց Հրամանատարին հանդիսաւոր գընացքն պալատականաց առեւէն, շրջապատեալ ի բանակէն, բազմութեան մէջ տեղէն՝ գրեթէ վերցած է: Ժողովուրդն կ'երթայ միշտ, զի ազօթքն միշտ տօն մ'է անոր համար, բայց զուսմներ, հեծեալ ոստիկանք և թնդանօթածիգ զօրք Սուլթանէն հեռու կը պահեն զժողովուրդն: Եւ ես Սէլամըքի հրաւիրելոց թուսյն մէջ լինելով, գիտեցի Փատիշահին հասնիլն ու մեկնիլն: Մեկնելու պահուն, Ապտ-Իւլ-Համիտ ուղղեց կառքն, զոր ինքն անձամբ կը վարէր, դէպ իւր հրաւիրեալսն և ողջունեց զայնս կրկին ու կրկին: Թուրք զօրականն շատ լաւ լինիլ երեւցաւ մեզ, բայց պաշտօնակալաց դէմքն այնքան լաւ չէր: Ժողովուրդն յայտնապէս գոհ և առողջ կ'երեւէր: Թուրք ցեղն դեռ ուժով է:

«... Յուսթի հողերով շրջապատեալ է Կ. Պոլիս և ուստի մին է այն մայրաքաղաքաց ուր ապրուստն շատ թանկ չէ: Ժողովուրդն ոչ շատ միս կուտէ և ոչ ալ գինի կամ գարեջուր կը խմէ: Գործ կը գտնէ մեծ խառնակայտին զանազան ծառայութեան մէջ, մանաւանդ փոխադրութեան, խաղախորդութեան, աղիւսագործութեան, սննդական պիտոյից և շինութեան մէջ: Նաւամատոյցն է, սակայն, որ աշխատութեան գլխաւոր տարրն կ'ընծայէ: 1890ին, նաւամատոյցին շարժումն 11 միլիոն թոնէլաթոյի հասած է: Բեռնակրութիւնն, հետեւապէս, զբաղման մեծ ճիւղ մ'է, և կը պարունակէ ոչ նուազ քան 7000 գործաւոր: Ուրիշ էսնաֆ մ'ալ սեղանաւորացն է, որք կը հաշուին լինիլ իբր 2,000: Սոցա արհեստն դրամոց գէշ վիճակին վերայ հիմնուած է. դրամափոխութիւնն ոչ այլ ուրեք այսքան գործունեայ է: Այս գործով Հայք, Յոյք և Հը-

րէայք շատ դրամ կը շահին:

«... Հանրային դաստիարակութիւնն բարձի թողի եղած չէ, միայն թէ միշտ կրօնի հետ կապակցեալ է: Մահմետականք 700 վարժարան և 177 դպրոց ունին ի մայրաքաղաքին: Բնակչաց բոլոր թիւն 900,000 և 1 միլիոնի մէջտեղն է: Երկու երրորդն միւսիւրման են: 1885ի վիճակագրութիւնն կը ցուցնէ թէ 2441 և այլ մահմետական շէնք կան, 112 եկեղեցի այլ և այլ արեւելեան քրիստոնէից, 10 կաթոլիկ եկեղեցի և 36 սինակսկ:»

Է. ՖՈՒՌՆԻԷ ՏԸ ՖԼԷ
(Նուվէլ Բըվիլ)

ՍՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հնտախաի տարածման դէմ խիստ միջոցներ ձեռք առնուած են ի Կ. Պոլիս: Հականերսական դեղեր մեծ Գանակութեամբ կը դործածուին: Եւրոպացի գաղթականք մայրաքաղաքին կը կարծեն թէ Սուլթանի ծայրայեղ երկչոտութիւնն ու գրգռեալ երեւակայութիւնն է պատճառ այս խոտութեանց, Գանդի բժիշկներն կասեն եղեր թէ Հնտախաի ստոյգ դէպքեր չեն տեսներ:

Խալիլ Պէյ, Պէյրուտի կառավարիչն, Տրուզ պետ մի ձերբակալած լինելով, Տրիւզներն ապստամբեր և թուրք զինուորներ սպաններ են:

Ստացանք նաև ոչ սակաւ նամակներ քաջալերական: Ահա լուսամբիս Հնչակեանի մի նամակն:

Ձիւսի, Նոյ. 8. 1893

Տէր,

Ձեր խմբագրականն, «Յայտարարութիւն Հայքի» խորագրով, բազմիցս ընթերցայ հակառակ իւր երկայնութեանն:

Թերևս մի քանի անգամ ևս պիտի ընթերցուի. զի յայժ Գանդի գտայ նորա ի յայտ ածած ճշմարտութիւնը:

Հնչակիստ մի եմ և Հնչակիստի մը տեսակէտէն ընթերցայ զայն. բայց որովհետեւ ազգս կը սիրեմ առաւել քան կուսակցութիւնս, կարող չեմ ուրանալ կամ անտեսել ճշմարտութիւնքն որ կը փայլին անդ իբրև արեգ:

Գիտեմ թէ կուսակցամոլք ունեւ պիտի սյրեն կամ ետ խրկեն թերթդ որով

ապացուցած պիտ լինին թէ տակաւին ճշտիւ ըմբռնած չեն ինչ է ազգասիրութիւն, սակայն քաջայայտ եմ թէ այդու չէք յուսահատիր: Ծննդարտութեան արտօնք համբերող և անվախ լինելու են: Իցէ թէ ամեն գործիչ ձեզ պէս չոյէր այն փափուկ ծիլն որ «Հայկական խնդիր» անուամբ ընծիւղիլ սկսած է և զոր ոմանք կոչտ ձեռօք վը սխմուեն:

Ա. Ս. Լ.

Անկլօ-Արմինեան Կազէթն Լոնտոնի Հրատարակած է Լուսանկարեալ խմբակ մի Հայ և օտար հայասիրաց, որք են Վեհ. Խորմեան, Վսեմ. Զէյմա Պրայս, և Մուռտէլլա, Մեծ. Տէր Յ. Իսկէնտէր (Նախագահ Հայր. Միութեան Փարիզու), և Մեծ Տէր Յ. Սթիվընսըն (անգամ անգլ. խորհ. և նախագահ անգլ. հայկական ընկերութեան):

Հինգ Լուսանկար պարունակող այս պատկերն կը ծախուի մէկ շիլին երկու բէնի: Պէտք է գրել հետեւեալ հասցէին:

THE ANGLO-ARMENIAN GAZETTE

3, Plowden Buildings
LONDON, E. C

Ինչպէս արդէն ծանուցած եմք Անկլօ-Արմինեան Կազէթին որ ամիսն անգամ մի կը Հրատարակուի, տարեկանն է 5 շիլին:

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ առանց քարի, և միանգամայն մաքուր ու ընտիր պուլիտը կը վաճառենք, փառնտը 8 սէնթի միայն, փութով հըրամաններն կը կատարուին միայն ամոնց որք կամիսիկ կը վճարեն:

Նիւ Եորքի և Ճէրզիի Հայերն եթէ 25 փառնտէ անլի գնելու լինին փոխադրութեան ծախքը մենք յամծն կառնունք վճարել: Իսկ ուրիշ քաղաքաց մեր յամախորդներն առնուազմ 50 փառնտ գնելու են փոխադրութեան ծախքէ ազատ մնալու համար:

Փորձեցէք մեզ և գոհ պիտի ըլլաք:

S. HAUVSEPIAN
582 PALISADE AVE.
JERSEY CITY HEIGHTS, N. J.

Ո՞ր Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս: Իմ անունա Լաչանս է, և խանութս կը գըտնուի Փրոնթ սթրիթի 60 նիւմէրոն: Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ: Ո՞վ որ կ'ուզէ չխաբուիլ և շունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՞վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կոշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

THE WORCESTER MECHANICAL
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵԲԷՆԻԻՄ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆԷ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:

MORRISON & Co.
88 Fulton Street New York

ՄՕՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՐՊԵՏ ԴԵՐԶՍԿ

Կը շինին պատուական ձեռք մի ըզգեստ 20 տալերով, օվըրքոթ 20 տալերով և փանթալոն 5 տալերով:

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ե Ք Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

FRANCOIS FRENTZ

ԱՌՍՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK
27ր և 28ր փողոցաց միջև

C. F. RANDALL

177 Front ST.

Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արդոյ Հայ Հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և ըւր-պըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ Հայ Հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և Միւսն Մէկ Գին ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգսն ք

Ձերդ Բանտօլ

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱՂԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէս, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէս, եթէ պայմանն հազար թալէսի է, կամ մինչև հինգ հազար թալէս, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անգամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաւրաւ վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէսն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի աեղեկութիւն տալ

ՎԱՅԵԼՈՒՉ ՉԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.

Յակօր Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԱՐԵՐ Ե. ԻՐԻՉԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վեբարերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըստակ զրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Սրաբկեր, Ձիւլիկէղէկ, Չունքուշ, ընդհանուր չըջականերով, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77. Էվինիու Նիւ Եորք
267 և 277. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն